Jos. Rauchenne

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
ակադեմիկոս, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ

Հայ ժողովուրդը մեր մեծ հայրենիքի եղբայրական ազգերի հետ միասին, ամբողջ աշխարհի բարի կամքի մարդկանց հետ միասին տոնում է իր հոգևոր մշակույթի նշանավոր տոներից մեկը՝ ազգային մեծագույն բանաստեղծ և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակը։ Նախապատրաստական այն մեծ ու երկարատև աշխատանքը, որ կատարվեց այդ հոբելյանի կապակցությամբ, այն սերն ու ոգևորությունը, որ նա առաջացրել է մեր սրտերում, նորից ու նորից հիշեցնում են մեզ, թե ինչպիսի մեծ, անփոխարինելի տեղ է գրավում Թումանյանը հայ գրականության և կուլտուրայի պատմության մեջ, մեր ժողովրդի ողջ հոգևոր աշխարհում։

Թումանյանը եկավ, ասես, ի մի բերելու հայ գրականության ստեղծագործական մեծ նվաճումները Խորենացուց, Նարեկացուց և Սայաթ-Նովայից մինչև Աբովյան ու Ռաֆֆի, այն ամենը, ինչի մասին նա գրել է իր հոյակապ տողերի մեջ.

Տանում ենք ճնուց մեր գանձերն աճգին.
Մեր գանձերը ծով.

Սկսելով իր ստեղծագործությունը անցյալ դարի վերջին տասնամյակում, Թումանյանը բարձրացրեց այդ ավանդները նոր աստիճանի և իր անունը մեկընդմիշտ գրեց այդ փառավոր անունների կողքին, դարձավ հայ բազմադարյան գրականության ամենամեծ, ամենավառ ու գեղեցիկ աստղերից մեկը։

Թումանյանը հանդես եկավ գեղարվեստորեն մարմնավորելու հայ ժողովրդի հոգևոր աշխարհի, նրա բնավորության ամենաբնորոշ, լավագույն գծերը, սոցիալական և ազգային արդարության անշեջ երազանքը, մարդասիրական մեծ խոհերը, քաղաքակիրթ ազգերի եղբայրության մեջ ապրելու կամքը։ Թումանյանի ստեղծագործությունը հայ ժողովրդի հոգևոր աշխարհի հայելին է, նրա կուլտուրական մեծության ամենահոյակապ վկայականներից մեկը աշխարհի և մարդկության առջև։

Կարճ ժամանակամիջոցում Թումանյանը դարձավ ժողովրդի կողմից ամենահարգված գրողը։ Կարդալով Թումանյանին, ժողովուրդը ճանաչեց ինքն իրեն։ Եվ ժողովուրդը սիրեց նրան անսահման սիրով։

Թումանյանն իր հետ բերեց հայ բանաստեղծական խոսքի, ամբողջ գրականության ժողովրդայնության ու ռեալիզմի նոր չափանիշներ։ Նա շատ ավելի մոտեցրեց մեր արվեստը կյանքին, ժողովրդին, իրականության ամենահասարակ երևույթների մեջ տեսավ պոեզիայի անսպառ աղբյուր։ Նրա պոեզիան արմատական մերժումն է արհեստականի և անբնականի, և հաղթանակը՝ իրական, անկեղծ բանաստեղծության։ Ահա թե ինչու Թումանյանից հետո հայ գրականության ողջ զարգացումը ամուր կերպով կապված է եղել և միշտ կապ-

ված կմնա նրա ավանդների հետ։ Ժամանակը չի հնացնում, այլ նոր փայլ և նշանակություն է տալիս նրանց։

Հանձին Թումանյանի հայ ժողովուրդն ունի մի բանաստեղծ, որի անունը իրավամբ, դրվում է համաշխարհային գրականության մեծերի կողքին։ Իզուր չէ, որ Եղիշե Չարենցն ասում էր.

Ես կարդում եմ նրան ու ասում.— Այս հմուտ, ճանճարեղ Լոռեցին
Հոմերի, Գյոթեի հետ մի օր՝ հավասար՝ նստել է Բեֆի։

Թումանյանն իր կյանքով ու գործունեությամբ ներկայացնում է քաղաքացիական ոգու մեծության, ազնվության և անձնազոհության մի պայծառ օրինակ։ Նա իր հանճարը անբաժան կերպով նվիրեց հարազատ ժողովրդին ոչ միայն գեղարվեստական երկերի մեջ, այլև անձնվեր աշխատանքով քաղաքական-հասարակական, գրական-կուլտուրական առավել սուր, կենսական հարցերի լուծման համար։ Հայ ժողովրդի պատմության ամենածանր շրջանում՝ մեր դարի առաջին տասնամյակներին, երբ դրված էր նրա բուն ֆիզիկական գոյության հարցը, Թումանյանը տառացիորեն այրվեց հայրենիքի ճակատագրով։ Նա հայկական կյանքի իսկական կենտրոնն էր, նրա ամենահեղինակավոր դեմքը, մեկը մեր ժողովրդի այն մեծ զավակներից, որը ճիշտ պատմական հեռանկարի մեջ տեսավ Հայաստանի ապագան։ Հայ ժողովրդի կյանքի և բարգավաճման անհրաժեշտ պայմանը նա տեսնում էր դեմոկրատական իդեալների հաղթանակի, անդրկովկասյան ժողովուրդների եղբայրության, մեծ Ռուսաստանի հետ հավերժական դաշինքի մեջ։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Թումանյանի երկերի հրատարակության և մասսայականացման գործը դարձավ պետական մի գործ և նրա գրքերը միլիոններով տարածվեցին Հայաստանում։ Նա թարգմանվեց սովետական ժողովուրդների բազմաթիվ լեզուներով։

Մեզ համար առանձնապես հետաքրքիր է հիշել այն մեծ աշխատանքը, որ Թումանյանը վարել է հայ գիտության մարդկանց համախմբելու, գիտական լուրջ շարժում սկսելու, վերջապես՝ հայկական ակադեմիա հիմնելու համար։ 1917 թ. Նա մարգարեաբար գրել է.

«Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերեն լեզվով և գիտնականների կաճառ, գիտության օջախ, Հայկական ակադեմիա։

Եվ պետք է ստեղծել Հայոց Համալսարանը, ուր կարելի լինի բարձրագույն գիտություններ ավանդել ու սովորել հայերեն լեզվով։ Մեր տարրական ու միջնակարգ դպրոցների մեջտեղը պետք է կառուցանել ու պահել մի գիտության տաճար, մեր մանր ու մեծ ճրագների մեջտեղը պետք է վառել մի մեծ ջահ։,— Հայկական Համալսարան»։

Այսօր Հայաստանի մայր հողի վրա ստեղծված ու բուռն կերպով զարգացող մեր գիտությունների ակադեմիան, մեր պետական համալսարանն ու մյուս գիտական-ուսումնական հաստատությունները մեծ բանաստեղծի այդ երազանքի լավագույն մարմնավորումն են։

Ակադեմիան իր կարևոր խնդիրներից մեկն է միշտ համարել ուսումնասիրել մեծ գրողի գրական ժառանգությունը, հրատարակել Թումանյանի երկերը, բազմակողմանի նյութեր և ուսումնասիրություններ։ Միայն վերջերս լույս են տեսել Թումանյանին նվիրված մի քանի գրքեր։ Այսուհետև ևս Թումանյանի ժառանգությունը կլինի մեր գրականագետների, լեզվաբանների և բոլոր մյուս հասարակագետների ուշադրության կենտրոնում։